ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Մխիթար Հերացի 12
Հեռ. (+ 374 10) 55 06 01
(+ 374 10) 55 03 07
Էլ.փոստ/ E-mail info@ncdc.am

19.02.2020 N ԱՎ/01/08.4/70-20

«ՄԵԴԻՍԱՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Հիմք ընդունելով «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Մեդիսար» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 2019թ. հուլիսի 25-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-36-08» պայմանագրով սահմանված պայմանները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ, 2.4.2-րդ, 2.4.5-րդ և 2.4.6-րդ կետերով սահմանված պարտավորությունները և Վաճառողը պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո Գնորդի կողմից լրացուցիչ տրամադրված ժամկետում չի մատակարարել № 33 չափաբաժնի ապրանքը, և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.1-րդ, 2.1.3-րդ կետի «ա» ենթակետի, 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի պահանջներով, տեղեկացնում եմ, որ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը.

1. մասնակի միակողմանի լուծում է Պայմանագիրը վերոնշյալ չափաբաժնի մասով;
2. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

Լրացուցիչ տեղեկացնում եմ, որ Վաճառողը պատասխանատվություն է կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՆՅԱՆ

Կատարող՝ Սիրանուշ Պապիկյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Հեռ. 010 55 06 01